ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

30.11.16 N 14/06.1/13330-16
Ձեր N

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2016 թվականի նոյեմբերի 24-ի N 314-ի 1 հարցմանը՝ հայտնում եմ հետևյալը.

1. 2016 թվականին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հաշվեկշռում գրանցված 9 ծառայողական ավտոմեքենաների պահպանման համար հատկացվել է 10,800,000 ՀՀ դրամ, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի N1001-Ն որոշմամբ հաստատված չափաքանակների: Միաժամանակ ուզում եմ հայտնել, որ վերջերս իրականացված օպտիմալացման շրջանակներում 4 ծառայողական տրանսպորտային միջոցներ դուրս են եկել շահագործումից, ուստի դրանց մասով նախատեսված գումարները մինչև տարեվերջ կտնտեսվեն:

2. ՀՀ առողջապահության նախարարությունը գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացրած մրցույթների արդյունքում կնքել է «N ՀՀ ԱՆ ՇՀԱՊՁԲ-15/1-2016/3-1» ծածկագրով վառելիքի գնման պայմանագիր «Ֆլեշ» ՍՊԸ հետ և ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների «N ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-15/3-2016/1-1» ծածկագրով գնման պայմանագիր «Մ-Բի-Էռ» ՍՊԸ հետ, որոնց լուսապատճենները ներկայացվում են սույն գրությանը կից: Տեղեկացնում եմ նաև, որ նշված պայմանագրերի վերաբերյալ հայտարարությունները կարող եք

գտնել www.gnumner.am էլ. կայքի <Գնումների հայտարարություններ>, <Կնքված պայմանագրերի մասին հայտարարություններ>, <Շրջանակային համաձայնագրեր> հարթակի <ապրանքներ> և <ծառայություններ> բաժիններում, իսկ կնքված պայմանագրերը և հավելվածները՝ ՀՀ էլեկտրոնային կառավարման կայքի <Ինտերակտիվ բյուջե> բաժնում՝ https://www.e-gov.am/interactive-budget/ հղումով:

Առդիր 41 էջ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ԲԱՂՐՅԱՆ

Կատարող՝ Արամ Գրիգորյան,
ֆինանսատնտեսագիտական
բաժին, հեռ. 564121